ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2021 թվականի N 54-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2021 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2021 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Ռուզաննա Մուրադի Սարգսյանին:
4. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին՝ համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Գետամեջ համայնքի 2021 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի ապրիլի 30
գ.Գետամեջ

Հավելված

Հանրապետության Կոտայքի մարզի

Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի

ապրիլի 30-ի N 54-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2021 թվականի մայիսի 17-ին ժամը՝ 11:00-ից մինչև 13:00-ն Գետամեջի համայնքապետարանի շենքում կկայանան հանրային բաց լսումներ՝ Գետամեջ համայնքի 2021 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Գետամեջի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) հրապարակված Գետամեջ համայնքի 2021 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել getamej.kotayq@mta.gov.am կամ getamejmc@mail.ru էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին:

Աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2021 թվականի N 55-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 496950, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0007/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 11:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 56-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Արթուր Հարությունյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Արթուր Հարությունյանին համայնք Գետամեջ 19-րդ փողոց թիվ 5 նկուղ հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0225-0112) այգետնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի մայիսի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 57-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով, հիմք ընդունելով Գագիկ Կարապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Գագիկ Զարզանդի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 4-րդ փողոցի 1-ին հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0010-0020) ինքնակամ՝ 2020 թվականին կառուցած շինությունը՝ 43,93 քառակուսի մետր և ծածկը՝ 25,88 քառակուսի մետր արտաքին մակերեսներով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.
1) օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 854 (ութ հարյուր հիսունչորս) դրամ:
4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 59 620 (հիսունինը հազար վեց հարյուր քսան) դրամ:
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Զարզանդի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական մայիսի 12
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2021 թվականի N 58-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և 104-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման տեղամասային կենտրոն, համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 11 հասցեում գտնվող «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական մայիսի 13
գ.Գետամեջ